



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4pt



PPH
1906

15 JAN 2010

Բ. Պ. Ա. Գ. Ի. Ե.

ՔԸՆԱՔԸԿԱՆ
ԿՈՒՍԸԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆ


ե հ

ՊԵՏԱԿԱՆ ԶԵԽԵՐԸ

Արևին Հ Յ Կ Ա Պ.

Թարգմ. Մ.

Հ Յ Ո



Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԵՐՄԱԿ ԸՆԿ. Մադարեան փոդ. №15
1906 (167)

19

321
14-62

26 SEP 2006

Վ. Պ. Ա. Գ. Ի. Ե.


Հեռացած
Բացած

ՔԱՂ ՔԱԿԱՆ
ԱՌԻՍԱԿՑՈՒԹԻՒՆԵՐՆ

b h

ՊԵՏԱԿԱՆ ԶԵԽԵՐԸ

Թարգմ. Մ.



Տպագործական Հանրապետության վագագանի փոք. № 15

1906

(167)

22 MAY 2013

183277

0005 432 69

27022-4.2

I

Կար ժամանակ, երբ մեզանում (Ռուսաստանում) ժողովուրդը շատ քիչ էր հետաքրքրում քաղաքական հարցերով: Նա լուռ ու մունջ տանում էր այն բոլորը, ինչոր անհամբոյր կեանքը բերում էր իրան. Նա անտրտունջ հպատակում էր իշխանաւորների բոլոր պահանջներին, միթքարելով այն աշխարհում հարիւրապատիկ վարձատրւելու յօյսով: Բազմադարեան ըստրկութիւնը, համարեա կատարեալ տգիտութիւնը, սոսկալի և անելանելի խեղճութիւնը սպանում էր նրա մէջ եղած կենդանի ոգին, ոչնչացնում էր նրա բոլոր ձգութիւնը դէպի լաւագոյն կեանքը: Հասկանալի է, որ այն ժամանակ ժողովուրդը չէր կարող մեծ հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի հասարակական հարցերը: Սակայն այդ անցեալը արգէն վաղուց և անգատնալի կերպով գլուրել է դէպի յաւիտենականութիւն: Այժմ ազգարնակութեան լայն խաւերը զարթնել են գիտակցական կեանք վարելու համար և աշխատում են ինքնուրոյն կերպով ըստոնել ներկայ պատմական մօմէնտի բարդ խնդիրները: Իրանց շահերը միահամուռ ոյժերով պաշտպանելու համար նրանք արգէն խմբւում են զանազան քաղաքական կուսակցութիւնների շուրջը: Բայց դա այնքան էլ հեշտ չէ: Որպէսզի կարելի լինի գի-



(5960-57)

4036 - 2002

տակցարար և անսխալ կերպով ընտրել այն կուսակցութիւնը, որը իսկապէս պաշտպանում է յարող անհատի դասակարգի շահերը, պէտք է լաւ զիտենալ, թէ ինչ է պահանջում ամեն մի կուսակցութիւն, որոնք են նրա մօտալուտ ինդիւներն և նեռաւոր նպատակները: Պէտք է լաւ զիտենալ, թէ ազգաբնակութեան որ խաւերի վրայ է յենուում կուսակցութիւնը, երբ իրան այս կամ այն նպատակ է դնում, և որ դասակարգի շահերն է պաշտպանում նա իր կուի մէջ: Քաղաքական կուսակցութիւնները, նամանաւանդ բուրժուական կուսակցութիւնները, յաճախ զարդարուում են գեղեցիկ ֆրազներով և յայտարարումներով ու զիտմամբ հրապուրիչ հմայքներ են ցուցանանում, որպէսզի անզիտակից մարդկանց կարողանան իրանց կողմը գրաւել, և շատ անգամ նրանց յաջողուում է այդ խաղը, մանաւանդ ժողովրդի ստոր խաւերի նետ: Ամեն մի կուսակցութիւն շահագրգուած է, որ իր կազմի մէջ որքան կարելի է շատ մարդ ունենայ: Իսկ որովհետև ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են աշխատաւոր դասակարգերը, ուստի բնական է, որ կուսակցութիւնները առանձնապէս աշխատուում են նրանց գուրգալ, յոյս գնելով նրանց տգիտութեան վրայ: Յաճախ նրանք իրանց գրօշակի վրայ գրում են ժողովրդի մէջ ընդհանրացած պահանջներ, բայց միայն նրա համար, որ հէնց դէպքը բերած տեղը դաւաճանեն և՛ գրօշակին և իրանց խոստումներին: Բուրժուական կուսակցութիւնները այլ կերպ չեն էլ կարող վարւել: Ամիս, ունուոր դասակարգերը ազգաբնակութեան չնչին մասն են կազմում և, երբ առանձնացած են նրանք ու մենմենակ կազմակերպւած, չեն կարող երկրի բազդի վրայ ազդող մի պատկառելի ոյժ ներկայացնել: Հարուստ դասակարգի առբողջ ոյժը կայանում է նրանում, որ

թէ քաղաքի և թէ զիւղի չքաւորութիւնից դուրս եկած միւսնաւոր բանւորութիւնը կախումն ունի նրանից և, քիչ զիտակցող ու քիչ կազմակերպւած լինելու պատճառով, հպատակւում է նրա բոլոր պահանջներին: Վերջապէս, ունենոր դասակարգի տրամադրութեան տակ են զիտութիւնը, լուսաւորութիւնը, քաղաքական մեծ փորձառութիւնը, որոնց շնորհիւ նա կարողանում է հեշտութեամբ խարել սկը սպիտակից հաղիւ ջոկող բանուորի և անզրագէտ զիւղացու: Եւրոպայի բոլոր երկրներում նա լայն չափով օգտւել է և գեր ևս օգտւում է վերոյիշեալ առաւելութիւններից: Բոլորովին այլ է այն կուսակցութիւնների բանը, որոնց նպատակն է պաշտպանել ժողովրդական ստոր խաւերի, չունեորների, մի խօսքով պրօխտարիստի շահերը: Նրանք արդէն կարիք չունեն խարելու կամ ժողովրդական բարեկամների շորեր հագնելու, որպէսզի կարողանան շատ կողմակիցներ գրաւել դէպի իրանց շարքերը: Նրանք շահագրգուած չեն ժողովրդի տգիտութեան և անզիտակցութեան մէջ, այլ ընդհակառակը, հէնց իրանք են աշխատում, որ ժողովրդի մէջ լայն կերպով տարածւեն բաղաքական գիտելիքներ և լայն չափերով զարգանայ ինքնուրոյնութեան և ինքնագործութեան ոգին: Զակառակ բուլքուական կուսակցութիւնների, որոնք ճկնում են ապացուցանել, թէ իրանք արտայայտի են ամբողջ ազգի շահերի, բանւորական կուսակցութիւնը շարունակ ցոյց է տալիս, որ ազգաբնակութեան մէջ գոյութիւն չունեն բոլոր դասակարգերի շահեր, որ կապիտալիստների և բանւորների, հողատէրերի և զիւղական չքաւորութեան շահերը խստիւ հակադիր են և ոչ մի դէպքում չեն կարող միենոյն կուսակցութեան ձեռքով պաշտպանւել, որ պերճախօս բուրժուական բոլոր խօսակցութիւնները միայն ու միայն կեղծ խօսքեր են և

գեղեցիկ քրազներ, որպէսզի բանւոր դասակարգը հանեն իր միակ ուղիղ ճանապարհից, որ է կազմակերպւել իրեւ անկախ կուսակցութիւն:

Հասկանալի է, որ քաղաքական կեանքի այս կամ այն հարցը վճռելիս, իւրաքանչիւր կուսակցութիւն իւր լուսարանութիւն է տալիս: Այդ լուսարանութիւնը կախւած է այն դասակարգի շահերից, որի պաշտպան հանդիսանում է կուսակցութիւնը: Բայց արի տես, որ իւրաքանչիւր կուսակցութիւն աշխատում է ապացուցանել, որ մենակ ինքն է արտայայտում ժողովրդի էական կարիքները և այդ կարիքներին ամենալաւ վը ձիռ տուղը ինքն է ու ինքը: Ուղղակի հաւատալ այդ հաւաստիացումներին, ի հարկէ, չէ կարելի: Պէտք է ամեն անգամ մանրամասնօրէն քննել, թէ արդեօք այս և ոչ թէ մի ուրիշ պահանջն է, այս և ոչ թէ մի ուրիշ ծրագիրն է համապատասխանում աշխատաւոր ժողովրդի շահերին: Այս գրքոյկում մենք կանգ կառնենք մի շատ կարեւոր հարցի վրայ, որին զանազան կուսակցութիւններ զանազան պատասխան են տալիս: Տեսնենք, թէ նրանցից որն է արդար ու ճշմարիտ, ով է տալիս մի այնպիսի պատասխան, որ ամենաճիշտ կերպով բաւարարութիւն տայ ժողովրդական ստւար խաւերի շահերին: Հարցը հետեւան է՝ որոնք են պետական կեանքի ամենալաւ ձեւը, պետական կազմի որ հիմունքների համար պէտք է մարտնչել: Պահպանողական կուսակցութիւնը, որ բաղկացած է չինոֆիկներից և խոշոր կալւածատէր-աղնւականներից, պաշտպանում է միահեծան միապետութիւնն, իրեւ միակ ձև, որ համապատասխանում է ոռուսաց կեանքի աւանդական ըակըզբունքներին և բղիում է ոռու ժողովրդի ամբողջ հոգեկան կազմւածքից: Ամեն տեսակ ազատամիտ կուսակցութիւն, որ առնասարակ բաղկացած է լինում ու

ներ դասակարգերի—արդիւնագործական և գիւղական բուլժուազիի—կողմանկիցներից, պնդում է, որ կառավարութեան ամենանպատակայալմար ձեւ սահմանադրական միապետութիւնն է, այսինքն ժողովրդական ներկայացուցչութիւնով սահմանափակւած միապետութիւնը: Բանւորական կուսակցութիւնն էլ իր կողմից յայտաբարում է, որ աշխատաւոր ժողովրդի լայն խաւերի շահերը պահանջում են ձեռք բերել մի այնպիսի քաղաքական կազմ, որտեղ պետութեան ամբողջ իշխանութիւնը անբաժան գտնւէր ամբողջ ժողովրդի ձեռքում,—ուամկավարական հասարակապետութիւնն է այդպիսի կազմը: Որպէսզի պարզ ու հասկանալի լինի, թէ որն է նրանցից արդարը, մօտից տեսնենք, թէ ինչ է ներկայացնում մեր թւած կառավարութեան ձեւը իւրաքանչիւրը և ում շահերի պաշտպան են հանդիսանում նրանք:

II

Միահեծան միապետութիւնն է այն պետական կազմը, որտեղ ամբողջ իշխանութիւնը կենտրօնացած է ժառանգական միապետի ձեռքում: Դեռ ժը դարում կառավարութեան այս ձեւ տիրապետում էր Եւրոպայի բոլոր պետութիւնների մէջ, բայց ժը դարի վերջերին և ժմթ դարի առաջին կիսին տեղի ունեցած յեղափոխական փոթորիկներից յետոյ, նա մաց միայն Ռուսաստանում և Թիւրքիայում: Միահեծան միապետութիւնների մէջ պետութիւնը և միապետի անձնաւորութիւնը իրար են ձուլւած, միմիայն նա, միապետն է հանդէս գալիս ամբողջ ազգի անունից, անսահման կերպով տնօրինում նրա բաղդը, պատերազմ յայտաբարում, խաղաղութեան դաշն կազում, օրէնքներ հաս-

տատում, հարկեր դնում և այլն և այլն: Թէ օրէնսդրական, թէ կատարողական իշխանութիւնն նրանից է բղխում: Նա կատարելապէս ազատ է իր գործողութիւնների մէջ, նրա կամքը օրէնք է բոլոր հպատակների համար: Ի հարկէ, միապետը որոշ գէպերում—կամ, եթէ ցանկանում է, շարունակաբար—կարող է աղքաբնակութեան այս կամ այն խաւերից խորհուրդ հարցնել. բայց ոչ ոք նրան չէ կարող պարտաւորացնել, որ համաձայնի իր յայտնած կարծիքի հետ:

Ի հարկէ, ոչ մի միապետ չէ կարող ինքնուրոյն կերպով վճռել ժամանակակից պետական կեանքի անթիւ ու անհամար խնդիրների: Հին ժամանակներում, երբ գոյութիւն չունէին հիմքեայ նման մեծ պետութիւններ, երբ առանձին-առանձին ցեղեր ապրում էին անկախ և առանձնացած, իշխանը կամ ցեղապետը կարող էր անձամբ միջամտել իր բոլոր ցեղակիցների գործերում: Նա և կառավարում էր, և գատում, և զինավարժութիւն սովորեցնում, և, հարեւն ցեղերի հետ պատերազմելիս, զլիաւոր առաջնորդի դեր կատարում: Այժմեան պետութիւնների մէջ, որտեղ ահազին տարածութեան վրայ ապրում են տամնեակ միջիօնաւոր բնակիչներ, ի հարկէ, չէ կարող նոյնը լինել: Միապետը իր կամքի անմիջական կատարումը յանձնում է մերձաւոր չինօվնիկների, և իսկապէս որանք են որ կառավարում են երկիրը: Այսպէս, օրինակի համար, մեզանում (Ռուսաստանում) օրէնքներ հրատարակելու համար աւագ չինօվնիկներից կազմում է Պետական Խորհուրդ: Այդ Խորհուրդի անդամները նշանակւում են միապետի ձեռքով: Նրանք քննում են բոլոր օրինագծերը, պետական եկամտի նախահաշիւր և ներկայացնում են կայսրին ի հասաւութիւն: Նրանց որոշումները պարտադիր չեն, որովհետեւ, եթէ կայսրը չը հա-

մածայնի նրանց կարծիքի հետ, այդ գէպեռում օրինագիծը օրէնքը չի դառնայ: Իրօք, ի հարկէ, միապետը համաձայնում է չինօվնիկներից կազմւած օրէնսդրական հիմնարկութեան կարծիքի հետ, որովհետեւ նա հնարաւորութիւն չունի անձամբ մտնել հրատարակելութիւր օրէնքների մանրամասների մէջ, հնարաւորութիւն չունի անձամբ քնննել բոլոր առաջարկուող օրինագծերը: Միապետին մտնում է միմիայն ստորագրել: Այդպիսի միապետի ինքնակալութիւնը անպայման կերպով փոխում է չինօվնիկների ինքնիշխանութեան: Վերջինս առանձնապէս արտայայտում է կատարողական իշխանութեան մէջ: Զէ որ, բացի օրէնքներ հրատարակելուց, միապետը պէտք է հոգս բաշի և նրանց կատարման, իրագործման համար: Եւ նա կատարողական իշխանութեան զլուխ է կարգում մինիստրների և ուրիշ չինօվնիկների, որոնք պարտաւոր են կառավարել երկիրը հաստատած օրէնքների հիման վրայ: Այդ մինիստրները նշանակում են աւելի ստոր չինօվնիկներ, վերջիններս՝ իրանցից փոքր չինօվնիկներ և այլն, կազմում է չինօվնիկների մի ահազին բանակ, որոնք իրանց իշխանութիւնը ստացել են միապետից և գործում են նրա անունից: Չինօվնիկների այդ բանակը կոչում է բիւրօկրատիա: Միապետը չէ կարող անձամբ հսկել չինօվնիկներին, և դրա համար նա նշանակում է նոր չինօվնիկներ, առաջին չինօվնիկներին վերահսութիւն անելու համար, և այսպէս անվերջ: Իսկապէս, ի հարկէ, ոչ մի վերահսութիւն չը կայ, և իւրաքանչիւր չինօվնիկների խելքին փչածն է անում: Եթէ որևէ չինօվնիկ խախտում է օրէնքը, այդ գէպեռում արգարագատութիւն պէտք է սպասել վերստին չինօվնիկներից, որովհետեւ միահեծանութեան մէջ (արսոլիւթիզմ) դատական իշխանութիւնն էլ գտնուում է նրանց

ձեռքում: Մի խօսքով միահեծան միապետութեան մէջ չինովնիկը ամեն ինչ է, նա է որ գրում է օրէնքները, նա է որ գործադրում է կեանքի մէջ, հէնց նա էլ պատժում է իր հրամարակած օրէնքների դէմ մեղանչողների: Այսպիսի կազմը անպայման պէտք է փոխւրիւրոկրատիայի ամենակալութեան, և իրօք նա փոխուր էլ է ամեն տեղ:

Իսկ ժողովրդի իրաւունքների մասին միահեծան միապետութեան մէջ խօսք էլ չի կարող լինել: Բացի այն հանգամանքից, որ ժողովուրդը կատարելապէս հեռացնում է օրէնողութեան և կառավարութեան մէջ մասնակցութիւն ունենալուց, նա միահեծանութեան (աբովլիւտիզմ) մէջ չէ վայելում և այնպիսի տարրական քաղաքացիական իրաւունքներ, ինչպէս են՝ խօսքի, մամուլի, ժողովների, ընկերակցութիւնների ազգատութիւնները, անձի անձեռնմխելիութիւնը և այլն: Դա էլ շատ հասկանալի է: Ալսը, եթէ զոյութիւն ունենար խօսքի և մամուլի ազգատութիւնը, կըմերկանար չինովնիկների ինքնակալութիւնը, անպայման բոլորի առաջ կըբացւէր ըիւրօկրատիայի տիրապետութեան անպէտքութիւնը, և ափ-աշկարայ կերպով կըբարոգւէր լաւագոյն կեանքի անհրաժեշտութեան մասին, իսկ այս բոլորը վերջ ի վերջոյ կըտանէր դէպի ոչնչացում չինովնիկների անկօնտրօլ իշխանութեան: Եթէ ժողովուրդը իր կարիքների մասին մտածելու և ամեն տեսակ ընկերակցութիւններ կազմելու համար ազատ կերպով հաւաքւելու իրաւունքն ունենար, շատ շուտով ամբողջ երկիրը կըծածկւէր ընկերակցութիւնների խիստ ցանցով, ընկերակցութիւնների, որոնց նպատակը կըլինէր ըարելուել ժողովուրդի վիճակը և, հետեարար, ամենից առաջ, ոչնչացնել մեծ ու փոքր չինովնիկների անկօնտրօլ կառավարումը: Նոյնը պէտք է ասել և

միւս ազատութիւնների մասին: Բիւրօկրատիան այդ շատ լաւ գիտէ և այդ պատճառով ամբողջ ոյժով կըռւում է այն բոլոր փորձերի դէմ, որ ժողովուրդը անում է իր իրաւունքները ընդլայնելու համար:

Ո՞ւմն է ձեռնտու այս քաղաքական կազմը:

Ամենից առաջ հասկանալի է, որ ինը պետութեան զլուխն է, որ շահագրգուած է ամբողջ իշխանութիւնը իր ձեռքում պահելու և երկրի բաղդը անկօնտրութիւնը անօրինելու մէջ: Նրանից յիշոյ չինովնիկութիւնը, բիւրօկրատիան է միահեծանութեան պաշտպան հանդիսանում: Ինչպէս վերը առւած էր, իսկապէս այս է երկրի տէրը, անպատճի անում է, ինչ-որ կամենում է, անարգել ծախսում է ժողովրդական փողերը, սիստեմատիքաբար թալանում է գանձարանը, մի խօսքով կատարեալ տէր է: Միահեծանութեան ժամանակ իշխանաւորները ամենազօր են և ամենակարող, իսկ ժողովուրդը ընկճած է, տգէտ և ստրկօրէն ճնշւած: Ո՞վ կուգենար զրկել այսպիսի արտօնեալ վրութիւնից:

Միահեծանութեան կողմանկից են և խոչոր հողատէրերը, աղնւականները, խոշոր փողատէրերը և միւս սրանց նման աղաներ, որոնք կարող են ամեն տեսակ կազմում, մասնաւանդ պրիկազների կազմում, լաւ ապրել: Սրանք են, որ իրանց ձեռքում պահում են ամենազօր չինովնիկներին: Կաշառքների միջոցով անել են տալիս, ինչ-որ ուղում են: Զերնտու պայմաններով իրանց փողերը փոխ են տալիս գանձարանին, թոյլտութիւն են ստանում երկրի համար կործանիչ բայց իրանց համար շահաւել ձեռնարկութիւնների համար, պետութիւնը մղում-տանում են դէպի զանազան աւանտիրաններ (ինչպէս կօրէական կօնցէսսիան էր, որ կործանիչ ու խայտառակ պառերազմով վերջացաւ). վերցնում են արքունական կապալներ (փողբաթներ) և

աշխատում են նախօրթք կաշառւած չինովսիկների հսկողութեան ներքոյ և այլն: Ի հարկէ, այդպիսի պարոններին ձեռնտու է ամենակալ բիւրօրատիայի պահպանումը, և նրանք վերջինիս նետ միասին ձգում են ինչ գնով էլ լինի պահպանել զոյութիւն ունեցող կազմը: Հասկանալի է, որ այսպիսի կառավարութեան հետեանքը լինում է՝ երկրի կատարեալ բայքայում, կամայականութեան և բանութեան տիրապետութիւն, բացակայութիւն դէպի վաղւան օրը ունեցած վստահութեան, կատարեալ անշարժութիւն բոլոր գործերի մէջ, ազգաբնակութեան ամենատարբական կարիքների անտես անելլ և նրա մէջ երևացած ինքնագործութեան բոլոր արտայայտումների խեղդումն: Սրանից, ի հարկէ, նախ և առաջ կեղեցւում են ազգաբնակութեան չունեոր դասակարգերը, որովհետև հարուստն և ունեորը միշտ կարող է մի կերպ յարմարութիւն ստեղծել և միջոցներ ձեռք բերել իր կարիքներին բաւարարութիւն տալու համար, այլ և օգնութիւն ստանալ կառավարութիւնից բանւորներին փառաւորապէս շահագործելու և ի հաշիւ նրանց հարատանալու:

Ժողովրդին բոլոր քաղաքական իրաւունքներից զրկելով, և բանւորներից հիւթեր քամելու ժամանակ ունեոր դասակարգերին օգնելով, միահեծանութիւնը բանւորներին հնարաւորութիւն չէ տալիս իրանց իրաւունքները պաշտպանելու, և խստիւ պատժում է ամեն մի փորձ, որ բանւորութիւնը անում է դասակարգային կոիւ մղելու համար: Այսպիսի կազմը, ի հարկէ, ձեռնտու չէ ստոր խաւերին, և բանւոր դասակարգը պէտք է վճռականապէս մաքանք նրա դէմ:

III

Սահմանադրական միապետութիւնը պետական

կազմակերպութեան ամենատարծւած ձեռքից մէկն է արևմտեան Եւրոպայում: Նա անցողական մի աստիճան է միահեծանութիւնից (ուամկավարութեան ըսկըզբունքի բացասումն) դէպի ռամկավարական հասարակապետութիւնը (իսկական ռամկավարութիւն): Պետական իշխանութիւնն այդտեղ բաժանած է միապետի և ժողովրդական ներկայացուցչութեան միջև: Թէ իշխանութեան որ մասն է ֆուում առաջնի ձեռքին և որը անցնում ժողովրդի ձեռքը, կախւած է այն հանգամանքից, թէ որքան յաջող է եղել ժողովրդի քաղաքական ազատութեան համար մղւած կոիւը: Այսպէս, օրինակի համար, Գերմանիայում և Աւստրիայում կայսրները պահպանել են այնպիսի մի իշխանութիւն, որ շատ անգամ կառավարում են առանց ժողովրդական ներկայացուցիչների գիտութեան և կամ նոյն-իսկ ընդդէմներանց կամքի, այն ինչ Անգլիայում, Բէլգիայում, որտեղ կառավարութեան ձեր նոյնպէս սահմանագրական է, բարձրագոյն իշխանութիւնը կինտրօնացած է պարլամենտի ձեռքում, իսկ թագաւորը միայն հնազանդորէն ստորագրում է իրան առաջարկուղ օրէնքները: Խօսելով սահմանագրական միապետութեան մասին, մենք չենք շօշափելու այն խնդիրը, թէ իւրաքանչիւր երկրում ինչ ձեռքով է արտայայտում նա, այլ կանգ կը առնենք միայն կառավարութեան այդ ձերն յատուկ յատկանիշների վրայ:

Իւրաքանչիւր պետութեան մէջ իշխանութիւնը բաժանւած է երեք մասի՝ օրէնսդրական, կատարողական և դատական: Օրէնստրական իշխանութիւնը, ինչպէս ցոյց է տալիս ինքը խօսքը, կայանում է ամբողջ ազգաբնակութեան և պետական բոլոր հիմնարկութիւնների համար պարտապիր կանոններ և օրէնքներ մշակելու մէջ: Իսկապէս նա է վճռում երկրի

բազգը, որի ձեռքին գտնւում է օրէնսդրական իշխանութիւնը, որովհետեւնա է որոշում ազգաբնակութեան առանձին անհատների կամ դասակարգերի իրաւունքներն ու պարտականութիւնները, նշանակում է հարկեր, բաշխում է եկամուտներ, որոշում է պաշտօնեաների իշխանութեան սահմանները և այլն: Բայց բաւական չէ օրէնքներ մշակել, նրանց պէտք է և իրագործել կեանքի մէջ: Այն իշխանութիւնը, որ ի կատար է ածում օրէնքները և հսկում նրանց ճշգրիտ կատարման վրայ, կոչում է կատարողական իշխանութիւն: Այս իշխանութիւնը պէտք է խստիւ անջատւած լի օրէնսդրականից: Օրինակի համար, երբէք չէ կարելի հարկեր նշանակելը և հաւաքելը մինոյն մարդկանց յանձնել: Հարկահանը միայն օրէնսդրի կամակատիւն է և երբէք չէ կարող այդ կամքը փոխել կամ կամայականորէն բացատրել: Միահեծան միապետութեան մէջ, որտեղ թէ օրէնսդրական և թէ կատարողական իշխանութիւնները կենտրօնացած են միապետի ձեռքում, իսկ իրապէս գտնում չինովնիկների ձեռքին, վերջիններս որևէ է օրէնքի կատարման ժամանակ հանդիպած առաջին անյարմարութեան դէպքում կամ փոխում են նրան, քմահաճօրէն բացատրելով կամ ուղղակի ոչնչացնում են շրջաբերական կարգադրութեամբ: Կատարողական իշխանութիւնն իր գործողութիւնների մէջ պէտք է լիովին ստորագրուի օրէնսդրական իշխանութեան որոշումներին: Միանգամայն առանձին պէտք է լինի և դատական իշխանութիւնը, որ պատժում է օրինագնացութեան համար: Նա պէտք է կատարելապէս անկախ լինի և բաւականաշափ հեղինակութիւն վայելէ ազգաբնակութեան աշքում: Ռամկավարական երկիրներում՝ այսինքն այն երկիրներում, որտեղ ինքը ժողովուրդն է վճռում բո-

լոր պետական գործերը՝ իշխանութեան այս Յ տեսակները բղխում են մի ազբիւրից—ժողովրդից և տարբերում են միայն նրանով, որ ի կատար են ածում առանձին-առանձին հիմնարկութիւնների միջոցով: Օրէնսդրութիւնը գտնում է կամ անմիջապէս ժողովրդի ձեռքում կամ նրա ներկայացուցիչների ձեռքին պարլամենտում: կատարողական իշխանութիւնը գլուխում է պարլամենտոց ընտրւած և պարլամենտի առաջ պատասխանատու մինիստրութեան ձեռքում, իսկ դատական իշխանութիւնը՝ ժողովրդից ընտրւած երդւեալների անկախ դատարանի ձեռքում:

Տեսնենք, թէ ինչպէս են բաժանում այս իշխանութիւնները սահմանադրական միապետութեան մէջ: Նախ և առաջ դիմինք օրէնսդրական իշխանութեանը: Բոլոր սահմանադրութիւնների մտքով, իւրաքանչիւր օրինագիծ օրէնք է դատնում միայն այն ժամանակ, երբ ընդունում է ժողովրդական ներկայացուցիչների օրէնսդրական ժողովարանի (պարլամենտի) կողմից և երբ ստորագրւած է միապետի ձեռքով: Դա նշանակում է, որ եթէ ժողովրդական ներկայացուցիչները անհրաժեշտ են գտնում փոխել մի որևէ է հին օրէնք, ոչնչացնել հարկեր, մեծացնել ազգաբնակութեան այս կամ այն խաւերի իրաւունքները և այլն, իսկ միապետը նրանց հետ համաձայն չէ, այն ժամանակ ամեն ինչ մնում է առաջւայ պէս: Միապետի ձայնը հաւասարւում է ամբողջ ժողովրդի ձայնին, և ամբողջ օրէնսդրական իշխանութիւնը բաժանում է երկու ժամի՝ կէսը տրւում է ժողովրդին, իսկ կէսը մնում է միապետին: Բայց շատ երկիրներում, բացի ժողովրդական ներկայացուցիչների պալատից, կայ և մի երկրորդ պալատ, որ կազմւած է ունեոր դասակարգերից՝ տոհմական ազնւականներից, կապիտալիստներից և կալ-

ւածատէրերից: Այս երկրորդ պալատը ունի նոյն իշխանութիւնը, ինչոր առաջինը, այսինքն առանց նրա համաձայնութեան ոչ մի օրէնք չէ կարող ընդունել: Այսպիսով, իշխանութիւնը արգէն ոչ թէ երկու, այլ երեք մասի է բաժանուում^{1/3} միապետին, մէկ երրորդը ունեոր դասակարգին և միայն մէկ երրորդը ամրող ժողովրդին (որտեղ ներկայացրած են լինում և ունեոր դասակարգերը): Այսպիսի պարագաներում, ի հարկէ, շատ թոյլ է լինում ժողովրդի ազգեցութիւնը օրէնսդրութեան վրայ, մինչդեռ միապետի և ունեոր դասակարգերի ազգեցութիւնը ուժեղ է արաայացուում: Եթէ ուշազրութեան առնենք և այն հանգամաքը, որ կառավարութիւնը և ունեորները մեծ մասամբ ջերմ բարեկամներ են, ապա հասկանալի կը լինի, որ այդպիսի կազմում օրէնքներ հաստատողը իսկապէս ոչ թէ ժողովուրդն է, այլ նրանք, որոնք ամենից քիչ կարող են ժողովրդական շահերի ներկայացուցիչ հանդիսանալ, դա թագի դաշնակցութիւն է բուրժուազիայի հետ: Մի քանի սահմանադրական երկիրներում ունեոր դասակարգերը աւելի ևս առաջ են գնում՝ նրանք հասել են մի այնպիսի վիճակի, ուր ժողովրդական ներկայացուցիչների պալատը ընտրուում է ոչ թէ ամրող ժողովրդի ձեռքով ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունքի հիմուն վրայ, այլ միայն նրանց ձեռքով, որոնք ունեն կայքային ցենզ, այսինքն մի որոշ սեփականութիւն: Մրա հետանքը լինում է այն, որ այդպիսի երկրներում ստորին պալատն էլ (սովորաբար այսպէս է կոչուում ժողովրդական ներկայացուցիչների պալատը) բացառապէս կազմւած է լինում ունեոր դասակարգերի ներկայացուցիչներից: Այսպիսի հիմքերի վրայ են կառուցւած և մեր Պետական Դումայի ընտրութիւնները՝

այստեղ ներկայացուցիչ կարող են ուղարկել միայն տանտէրերը, վաճառականները, գործարանատէրերը, հարուստ վարձաբնակները (կենողները) և գիւղական վոլոստի ժողովները, վերջիններս կազմւում են հողատէրերից, ընտրւած մէկ-մէկ իւրաքանչիւր տասն տնից: Կատարելապէս զրկւած են մասնակցութեան իրաւունքից (և այն էլ մի այնպիսի ոչ-մի իրաւունք չունեցող «օրինախորհրդակցական» հիմնարկութեան մէջ, ինչպէս մեր Դուման է) բոլոր Փարբիկային և գիւղական բանւորներ, մանր քաղաքացիութեան մեծ մասը, ժողովրդի սրտին մօտիկ և աշխատաւոր ինտելիգենցիան՝ զեմստվոյական ուսուցիչներ, բժիշկներ, ստատիստիններ և այլն, սեփական կալւած չունեցող բոլոր չափահաս գիւղացիք, գիւղական տանտէրերի $6/10$ մասը և շատ ուրիշները: Հասկանալի է, որ այսպիսի Դուման միայն ունեոր դասակարգերի շահերի արտայայտիչը կարող է լինել: Աւստրիայի և Պրուսիայի ընտրութիւնները սարքւած են այնպիսի հիմքերի վրայ, որ ժողովրդի չնչին մասը նոյնքան պատգամաւոր է ուղարկում, որքան և սուտար մեծամասնութիւնը: Այսպէս, օրինակի համար, Պրուսիայում ազգաբնակութիւնը բաժանուում է խմբերի՝ առաջին խմբի մէջ մտնում է ազգաբնակութեան $40/0$ -ուը, ամենահալուստ և ականաւոր մարդկանցից, երկրորդի մէջ $12/0$ -ուը, սովորական հարուստներից, վերջապէս երրորդի մէջ մնացած ազգաբնակութիւնը $-84/0$ -ուը Այդ խմբերից իւրաքանչիւրը հաւասար թուզ ներկայացուցիչներ ունի լանգտագում (այսպէս է կոչուած պարլամենտը Պրուսիայում): Այսպիսի սիստեմի է տիրում Սաքսոնիայում, Բրումբինիայում և մի քանի ուրիշ երկիրներում: Անկախ նոյն իսկ այն բանից, թէ ինչպէս է ստեղծուած ժողովրդական ներկայացուց-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՅ. ԵԽՈՑՈՒՅՈՒՆ
СУДЪЯ-АРХ. ССР

չութիւնը, սահմանադրական միապետութիւնների մէջ, մանաւանդ, երբ գոյութիւն ունի երկրորդ պալատը (համարեա ամեն տեղ կայ), ժողովրդին պատկանում է օրէնսդրական իշխանութեան միայն երրորդ մասը, այն ինչ մնացած իշխանութիւնը կենդրանացած է միապետի և բուրժուազիայի ձեռքում:

Բայց սահմանադրական երկիրներում միապետը յաճախ, յենւելով իրական ոյժի (նրա ձեռքին են և՝ զօրքը և բիւրօկրատիական ամրոջ մեխանիզմը) և այն հանգամանքի վրայ, որ ինքն է պետութեան գերազոյն գլուխը, բոլորովին ինքնապլուխ կերպով վը-ճուռում է այն հարցերը, որոնց վերաբերմամբ նա յոյս չունի իր կառավարութեան համար ցանկալի պատասխան ստանալ պարլամենտից: Այդպիսի բոլոր քայլերը ի հարկ է, բացատրում են «ծայրայեղ կարիքով», «բացառիկ հանգամանքներով» և այլն: Աւստրիայում օրինութիւն ունի սահմանադրութեան մի յօդւած (§ 14), որ ասում է, թէ ծայրայեղ անհա-ժեշտութեան դէպքում, երբ հարկաւոր է այնպիսի կար-գագրութիւններ անել, որոնց համար պահանջւում է պարլամենտի համաձայնութիւնը, իսկ պարլամենտը չէ գումարում, ահա այդ ժամանակ կայսրը իրաւունք ունի ուկազ (հրագանդ) հանելու, մինիստրութեան պա-տասխանաւութեամբ, եթէ միայն այդպիսի հրագան-գով փոփոխութեան չեն ենթարկում սահմանադրու-թեան հիմնական դրութիւնները, երկար ժամանակով չէ ծանրաբեռնուում պետական գանձարանը, չէ վնասուում պետական հարստութիւնը: Եւ որովհետեւ պարլամենտի գումարման և արձակման իրաւունքը պատկանում է կայսրին, ուստի, երբ դժւար է լինում ժողովրդական ներկայացուցիչներից թոյլաւութիւն ստանալ իր ցան-կացած օրէնսդրական կարգադրութեան համար, այդ

դէպքում կայսրը կարող է արձակել նրանց և արտա-կարգ հրահանգով հասնել այն բանի, որին չէր կարելի պարլամենտի միջոցով հասնել: Աւստրիական կառա-վարութիւնը շատ յաճախ է դիմել այդ միջոցին և բազմաթիւ հարցերում զէրօյի է հասցրել ժողովրդա-կան ներկայացուցիչների իրաւունքը: Իշխանութեան 2 աղբիւրի գոյութիւնը միշտ առաջ կը բերի իրաւունք-ների այսպիս խախտումն այս կամ այն կողմից բայց, քանի որ սահմանադրական երկիրներում զօրքը և չի-նօմիկների բանակը գտնուում է միապետի ձեռքում և ունեոր դասակարգերն էլ նրան են աջակցում, հասկա-նալի է, որ միապետն է յաղթող հանդիսանում և ոչ թէ ժողովուրդը: Ի հարկէ, սահմանադրական երկիրնե-րում ժողովուրդը անհամեմատ շատ իրաւունքներ ու-նի, քան միահիծանութեան մէջ, բայց այդ իրաւունք-ները սաստիկ սահմանափակ են և նրանցից մինչև կա-տարեալ ումկավարութիւնը սարեր ու ձորեր կան:

Սահմանադրական պետութիւնների մէջ կատարո-ղական իշխանութիւնը ամրոջապէս գտնուում է միա-պետի ձեռքում: Նա է, որ նշանակում է մինստրներ, նա է, որ հրաժարեցնում է նրանց: Ճիշտ է մինստրները պատասխանաւու են ժողովրդականներկայացուցիչների առաջ, բայց յաճախ այդ պատասխանաւութիւնը այնքան է սահմանափակւում, որ մինստրները միմիայն պատասխաններ են տալիս պարլամենտի հարցապլն-դումներին: Այսպէս, օրինակի համար, Գերմանիայում կայսերական կանցլէրը և մինստրները նշանակուում են կայսրի ձեռքով և երբէք պարտաւոր չեն հրաժարական տալ կամ հեռանալ: Երբ բայլիստազը անվատահութիւն է յայտնում նրանց: Այլ կերպ է բանը Ագլիայում: Այնտեղ ժողովուրդը ձեռք է բերել մի այնպիսի կարգ, որտեղ մինստրութիւնը պէտք է կազմէի պարլամեն-

տում մեծամասնութիւն կազմող կուսակցութեան պատ-
գամաւորներից, և ոչ մի մինստրութիւն չի կարող իշ-
խանութեան գլուխը մնալ, երբ պարլամենտը նրան
հաւատ չէ ընծայում: Բայց, ընդհանրապէս, Անգլիայի
մասին պէտք է ասել, որ այդտեղ թագաւորը գոյու-
թիւն ունի լոկ անունով, իսկ իրողապէս նա չունի և
ոչ մի իշխանութիւն ու ամբողջապէս կախւած է պար-
լամենտից: Եթէ մի գեղեցիկ առաւօտ Անգլիան զարթ-
նէր առանց թագաւորի, այդ բանը, անշուշտ, ոչ ոք
չէր կարող նկատել, բացի պալատական ծառայողնե-
րից: Սահմանադրական երկիրների կատարողական իշխանութեան մասին խօսելիս, ոչ մի գէպքում չի կա-
րելի անգլիական ներկայ կարգերի վրայ կանգ առնել:
Համարեա բոլոր սահմանադրական երկիրներում միա-
պէտը, իբրև կատարողական իշխանութեան գլուխ, ի-
րողապէս, կարելի է ասել, որ կախումն չունի ժողո-
վրդական ներկայացուցչութիւնից և յաճախ աղմինիս-
տրացիայի (վարչութեան) և զօրքի վրայ (զօրքը ամ-
բողջապէս գտնուում է միապէտի ձեռքում) յենելով,
պարլամենտի կամքին ընդդէմ է գնում: Օտար պետու-
թիւնների հնտ յարաբերութիւն ունենալիս, պատերազմ
յայտարարելիս, խաղաղութեան դաշն կնքելիս, եւրո-
պական սահմանադրութիւնների համաձայն միապէտը
գործողութիւնների կատարեալ ազատութիւն է վայե-
լում, իսկ պարլամենտին վերապահւած է համաձայնել
պետական գանձարանից միջոցներ բաց թողնելիս:
Սակայն այդ իրաւունքն էլ խախտում է միապէտի
կողմից զանազան պատրակներով:

Իսկ ինչ վերաբերում է դատական իշխանու-
թեան կազմակերպութեանը, պէտք է ասել որ այդտեղ
էլ արտացոլուում է կառավարութեան սահմանադրական
ձևի միջանկեալ կամ անցողական բնաւորութիւնը:

Մասնակի ժողովրդական իշխանութեանը համապա-
տասխանում է և մասնակի ժողովրդական դատարանը:
Երգւեալների դատարանի հետ միասին կարելի է
տեսնել միապէտի ձեռքով նշանակւած չինօվնիկներից
բաղկացած թագային դատարաններ: Սա, ի հարկ է,
ազգում է արդարագատութեան ամբողջ ընթացքի
վրայ, մանաւանդ այն գէպքում, երբ ընդհարում տե-
ղի ունի ժողովրդի և կառավարութեան դործակալ-
ների միջև: Իսկական ժողովրդական և միանգամայն
անկախ դատարանը կարող է գոյութիւն ունենալ
միայն այն պետութեան մէջ, որտեղ իշխանութեան
միակ աղբիւը ինքը ժողովուրդի է:

Ո՞ւմն է ձեռնստու այս քաղաքական կազմը:

Ազատամիտ բուրժուազիան ինչու այդպէս պիխու է
բռնում նրա փէշերից: Ահա հարցեր, որոնց մենք
գեռ պէտք է պատասխան տանք: Բուրժուազիան փա-
փագում է ձեռք բերել, այնպիսի պետական կազմ,
որտեղ նա կարելոյն չափ մեծ ազգեցութիւն ունենայ
բոլոր գործերի վրայ, իսկ նրա ոխերիմ թշնամին—
պրօլետարիատը, որքան կարելի է ըիչ: Բացի դրանից
բուրժուազիան ուզում է, որ իր տրամադրութեան
տակ միշտ լինի այնպիսի ոյժ, որ կարողանար ձնշել
ու խեղդել պրօլետարիատի բոլոր ոտնձգութիւնները,
ուղղած ներկայ հասարակական կազմի սրբութիւն
սրբոցի գէմ, որ է վարձու աշխատանքի շահագործու-
թեան ազատութիւնը, արդիւնաբերութեան գործիքների
մասնաւոր սեփականութիւնը և այն: Սահմանադրա-
կան միապէտութիւնը, իսկ և իսկ արձագանք է տալիս
այդ պահանջներին: Երկպալատեան սիստեմի և ցեն-
զոյին ընտրութիւնների շնորհիւ ապահովւած է բուր-
ժուազիայի անպայման ազգեցութիւնը օրէնսդրու-
թեան վրայ: Արկամտեան եւրոպայի սահմանադրական

տէրութիւնների միապետը, որը այլևս չունի այնքան
ոյժ, որ կարողանար բռնակալ դառնալ և ունեոր դա-
սակարգերի գլխին նստել. բայց որը գեռ էլի ունի
այնքան ոյժ, որով կարող է խեղդել ու փշու բան-
ւորական յեղափոխութեան ամեն տեսակ ձգտումներ,
բուրժուազիայի և բանւոր դասակարգի միջն եղած
ընդհարծան գէպօրում—ահա այդ միապետը մի տեսակ
նախապաշտապանող պարիսպ է բուրժուազիայի համար,
որով նա յոյս ունի կազմակերպւած պրօլետարիատի
թափ ու յարձակումից ազատւելու:

IV

Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Հիւսիսային-
Ամերիկական Միացեալ Շտատներում մենք հանդի-
պում ենք կառավարութեան երրորդ, ճիշտ է, գեռ ևս
լաւ չը զարգացած ձեի,—հասարակապետութեան. դա
կառավարութեան մի այնպիսի ձե է, որում ռամկա-
վարութիւնը մացրւած է ամենահետեղական կերպով:
Եյս նոր ձեի կատարեալ զարգացման ժամանակ ժո-
ղովուրդն է օրէնք դնում, ժողովուրդն է կառավա-
րում, ժողովուրդն է դատում: Միայն ու միայն նրա-
նից է բղսում ամեն մի իշխանութիւն, մի միայն նա
է երկրի տէրը: Հակառակ միապետութեան բոլոր
տեսակներին, այդտեղ ամեններն չկայ որևէ դինաս-
տիայի ձեռքին գտնող ժառանգական իշխանութեան
իրաւունք, այդ տեղ չկայ ոչ մի իշխանութիւն, որ
չըդլիք ժողովուրդի կամքից: Ձշմտրիտ է, համարեա-
բոլոր հասարակապետութիւնների մէջ ժողովուրդը
իր ընտրեալների ձեռքով ազգի ներկայացուցչու-
թիւնը յանձնում է բաղաքացիներից մէկին (նախա-
գահին), սակայն նախապահի իշխանութիւնը ոչ մի
քանով նման չէ միապետի իշխանութեանը: Նա ըն-

արւում է միայն մի որոշ ժամանակով և կարող է
փոխել ու դատի ենթարկւել (ինչպէս այժմ ֆրան-
սիայում—պետական դաւաճանութեան համար) ժողո-
վրդական ներկայացուցիչների որոշմամբ: Օրէնքների
մշակման ժամանակ նա ոչ մի իշխանութիւն չունի և
ամեն բանում միայն պարլամենտի կամքն է կատա-
րում: Կատարողական իշխանութեան գլուխ համար-
ւելով հանդերձ, նա շատ անգամ միայն բաւականա-
նում է պարլամենտի մեծամասնութիւնից մինիստր-
ներ նշանակելով և ժողովրդի կողմից անմիջապէս կամ
նրա ներկայացուցիչների ձեռքով ընդունւած օրէնքներ
հրատարակելով: Միայն Հիւսիսային—Ամերիկական
Միացեալ Շտատներում է, որ նախագահը կատարո-
ղական իշխանութեան իսկական գլուխն է հաշւում և
մինիստրութիւններ ընտրելիս կատարելապէս անկախ
է. այս հանգամանքը, անկասկած, իստիւ սահմանա-
փակում է ժողովրդի կամքն ու իրաւունքը. բայց սա
մի բացառութիւն է և ուրիշ ոչինչ: Ֆրանսիայի և
Շվեյցարիայի նախագահները այդպիսի անկախու-
թիւն չեն կայելում:

Ինքնակալ ժողովուրդը լինչպէս է ի կատար
ածում իր իրաւունքները: Սկսէնք օրէնսդրութիւնից:
Հասարակապետութեան օրէնքները հրատարակում
են կամ անմիջապէս ժողովրդի և կամ պարլամենտ
կազմող ներկայացուցիչների ձեռքով: Առաջին դէպ-
քում առաջարկւած օրինագծի թեր կամ դէմ քւէար-
կում է ամբողջ ժողովուրդը, և եթէ օրինագիծը ստա-
նում է ձայների մեծամասնութիւն, այն ժամանակ
նա օրէնք է դառնում: Հակառակ դէպքում մերժում
է: Մինչև մի որևէ օրինագիծ քւէարկութեան կին-
թարկւի, նա երկար ժամանակ ըննադատում է լրա-
գիրներում և հասարակական ժողովներում, այնպէս

որ ամբողջ ժողովուրդը մասրամասնօրէն ծանօթանում է օրինագծի թէ հակառակորդների և թէ կողմնակիցների կարծիքների հետ։ Զայնատուրթեան այս ձեզ կոչում է թէֆէրէնդում։ Թէֆէրէնդումին ենթարկում են կամ բոլոր նոր օրէնքները կամ նրանցից մի քանիսը, մի որոշ թւով քաղաքացիների կամ օրէնսդրական ժողովարանի պահանջմամբ։ Թէֆէրէնդումը ժողովրդական օրէնսդրութեան գեռ հաղաղէպ ձեւ է։ Ներկայումս նա լայն կերպով տարածւած է միմիայն Շվեյցարիայում։

Սակայն, ինչպէս կուզէ տարածւի թէֆէրէնդումը, (ուղղակի ժողովրդական օրէնսդրութեան կատարեալ ձեզ), նա չէ կարող պարլամենտի տեղը բանել։ Կեանքը առաջ է բերում այնքան նոր ու բարդ խնդիրներ, որ նրանց անհնար է վճռել ամբողջ ժողովրդի անմիջական ձայնատուրթեանը։ Սա շատ կը զանդաղեցնէր օրէնսդրութեան ընթացքը և շատ դէպքերում գժւար կը լինէր պարզ ու որոշ վճիռներ տալ։ Ռամկավարական հասարակապետութեան մէջ պարլամենտը ընտրում է ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունքի հիման վրայ, այսինքն ամեն մի չափահաս քաղաքացի անկախ թէ դաւանանքից և թէ կայքային ցենզից՝ իրաւունք ունի պատգամաւորներ ընտրելու պատգամաւորները ընտրում են անմիջապէս ժողովրդի և ոչ թէ լիազօրների ձեռքով (ինչպէս, օրինակ, մեր Պետական Դումայում), որի ժամանակ ամեն տեսակ ձնշում վերացնելու համար ապահովում է ձայնատուրթեան կատարեալ գաղտնիքը։ Այժմեան հասարակապետութիւններից և ոչ մէկում (բացի նոր Զելանդիայից և մի քանի Ամերիկական շտատներից) հետևողական կերպով չէ մտցըրւած ընտրութիւնների ընդհանուրութեան սկզբունքը,

այսպէս, օրինակի համար, ֆրանսիայում, Հիւս.-Ամերիկական Միացեալ Շտատներում և Շվեյցարիայում բոլոր կանայք զրկւած են ընտրողական իրաւունքից։ Ֆրանսիայում ձայնի իրաւունք չունի նա, ով վերջին 6 ամսի ընթացքում մի որոշ տեղ չէ մնացել և այլն։ Կան և ուրիշ սրանց նման սահմանափակումներ, որոնք շարունակում են յարատեել բուրժուական դասակարգերի ջանք ու ճիգով ուամկավարութիւնը աղճատելու նպատակով։ Իսկական ուամկավարական կազմում դէպի որը ձգտում են բոլոր բանուորական կուսակցութիւնները ընդհանրութեան սկզբունքը ընտրութիւնների ժամանակ պէտք է լիովին արտայացտի։ Ամեն մի չափահաս քաղաքացի կամ քաղաքացիունի՝ առանց ազգութեան, կրօնի, կայքային հարստութեան, պաշտօնական զրութեան, տեղակեցութեան... խտրութեան պէտք է երկրի պետական կեանքում մամնակցելու և օրէնսդրական ժողովարանի պատգամաւորներ ընտրելու իրաւունք ունենայ։ Ամեն մի, թէկուզ առաջին հայեցքից չնչին շեղումն ընտրութեան ընդհանրութեան սկզբունքից հազարաւոր քաղաքացիների, մասնաւունդ ազգաբնակութեան չբաւոր դասակարգերից, զըրկում է քաղաքական իրաւունքներից։

Ներկայիս հասարակապետութիւնների մէջ, ինչպէս և սահմանադրական միապետութիւններում, ընդհանուր, հաւասար և ուղղակի ձայնատուրթեամբ ընտրւած ժողովարանի ներկայացուցիչների պալատի կողքին, բուրժուազիան յաջողեցրել է և մի երկրորդ պալատ հաստատել (այսպէս ասած սենատ), որը գըլխաւորապէս կազմում է ունենոր դասակարգերից։ Այսպէս, օրինակ, ֆրանսիայում սենատորը ընտրում է ոչ թէ ժողովրդի կողմից, այլ առանձին շրջանային յանձնաժողովներից, ուր մտնում են այդ շրջանի

պարլամենտական պատգամաւորները և քաղաքային ու
միւս տեղական ինքնավար մարմինների ներկայացու-
ցիչները:

Իսկ որովհետև դրանց մեծ մասը «հին մար-
դիկ» են ունեոր գասակարգերից, ուստի հասկանալի է
որ սենատը—անմիջապէս ժողովրդի ձեռքով ընտրւած
պատգամաւորների պալատի համեմատութեամբ—ուղ-
ղակի ունեորների շահեր պաշտպանող հիմնարկութիւն
է: Երկրորդ պալատը խոչընդու է հանդիսանում առ-
հասարակ այն բոլոր դէպքերում, երբ ժողովրդական
ներկայացուցիչների պալատը ուամկավարական տար-
րերի ճնշմամբ ճենամուխ է լինում այս կամ այն
վճռական բէֆօրմների: Ռամկավարական հասարակա-
պետութեան մէջ երկրորդ պալատի գոյութիւնը կա-
տարեալ անմտութիւն է, և նրա դէմ վճռականապէս
մաքառում են ուամկավարութեան բոլոր ճշմարիտ
կողմանակիցները: Պարլամենտը պէտք է բաղկացած
լինի մի պալատից և ամբողջ իշխանութիւնը իր ձեռ-
քում ունենայ:

Օրինագծեր առաջարկելու կամ գոյութիւն ունե-
ցող օրէնքների մէջ հարկաւոր փոփոխութիւններ
մտցնելու իրաւունքը պետական կազմակերպութեան
վերոյիշեալ ձեփ ժամանակ վերապահնաւած է թէ քաղա-
քացիներին և թէ օրէնսդրական ժողովի պատգամա-
ւորներին: Իւրաքանչիւր օրինագիծ քննում է պար-
լամենտում, և եթէ յօգուտ նրա ձայն է տալիս մեծա-
մասնութիւնը, այն ժամանակ օրէնքի ոյժ է ստանում:
Նրանց հրատարակում է նախագահը որոշ ժամանակա-
միջոցում. պէտք է ասել, որ վերջինս իրաւունք ունի
պարլամենտին տուաջարկել զանազան ուղղութեար մըտ-
ցնել նրա մէջ, սակայն երբէք իրաւունք չունի պար-
լամենտից ընդունուած օրէնքը հաստատելու կամ մեր-

ժելու: Եթէ պարլամենտը նախագահի առաջարկած
ուղղութեարը մերժէ, այդ դէպքում նախագահը պար-
տաւոր է սահմանադրութեան մէջ որոշւած ժամանա-
կամիջոցում օրէնքը հրատարակել: Այսպիսով, ընդդէմ
միահեծան միապետութիւնների, որոնց մէջ ամբողջ
օրէնսդրական իշխանութիւնը գտնուում է միապետների
ձեռքում, հասարակապետութեան մէջ նա գտնուում է
ժողովրդական ներկայացուցիչների ձեռքում: Պարլա-
մենտը ոչ միայն օրէնքներ է հրատարակում, այլև
հսկում է նրանց ձգրիտ կատարման վրայ: Պարլա-
մենտի պատգամաւորներից կազմւած մինիստրական
կարինէտը կատարողական օրգան է համարւում: Այդ
մինիստրութիւնը ժողովրդական ներկայացուցիչների
առաջ պատասխանատու է իր ամեն մի քայլի համար
և պէտք է բացատրութիւն տայ այն բոլոր գործերի
մասին, որոնց համար հարցապնդում է լինում պատ-
գամաւորների կողմից: Պարլամենտի մեծամասնու-
թեան հետ ունեցած առաջին ընդհարման դէպքում,
նա պէտք է հրաժարական տայ: Եթէ մեծամասնու-
թիւնը իրան կողմը չունենայ, մինիստրութիւնը մի օր
չէ կարող իշխանութեան գլուխը մնալ: Ի հարկէ, մի-
նիստրը պատասխանատու է ոչ միայն իրան, այլ բո-
լոր ստորագրեալների արարքների համար: Այստեղ
արդէն չի կարող լինել չինովնիկների այն անպատիժ
ինքնիշխանութիւնը, որ կայ միահեծանութեան մէջ.
Լայն հրապարակայնութեան շնորհիւ իւկոյն կրացւին
մութ արարքները, հեռագիրը բոռէպէտից այդ մասին
կը հաղորդէ պարլամենտին, շահագրգուած պատգամա-
ւորները իսկոյն և եթ բացատրութիւն կը պահանջեն
համապատասխան մինիստրից, և ժողովրդի կոխկըր-
տւած իրաւունքը կը վերականգնւի: Հասկանալի է,
որ կատարողական իշխանութեան այսպիսի կազմա-

Կերպութեան ժամանակ նոյն իսկ խօսք չէ կարող լինել մինիստրների կամ միւս բարձր պաշտօնեաների կողմից հրատարակւող զանազան շրջաբերականների մասին, որոնք ոչնչացնում են կամ լրացնում օրէնքը։ Մինիստրների կարինէտը պէտք է կառավարէ ժողովրդական ներկայացուցիչների կամքի համաձայն։

Այդտեղ դատարանն էլ ժողովրդի ձեռքին է գոնուում Ընտրովի դատաւորներ, երգևեաների դատարան, վերջապէս, ժողովրդական ներկայացուցիչներից կազմւած բարձրագոյն դատարան—ահա արդարադատութեան կազմակերպութիւնը կառավարութեան հասարակապետական ձեռք մէջ։ Բոլորը հաւասար են օրէնքի առաջ, չըկայ և չի կարող լինել առանձին դատարան գիւղացիների համար, առանձին—ունեոր դասակարգերի համար և առանձին—չինովնիկների համար։ Պէտք է լինի մի հատ ընդհանուր դատարան, բոլորովին անկախ վարչութիւնից և սերտ կապւած ժողովրդի հետ։ Այդպիսի դատարանը կարող է գոյութիւն ունենալ մի այնպիսի կազմում, որտեղ ժողովրդից չըրգիսող իշխանութիւն չըկայ։

Պետական կազմի այս ձեւը բաղաքական իրաւունքների հետ միասին ազգաբնակութեանը երաշխաւում է նաև բաղաքացիական բոլոր ազատութիւնները։ Նա ճանաչում է ժողովների և ընկերակցութիւնների լիակատար ազատութիւն, ազատութիւն մամուլի և խօսքի, ազատութիւն ցոյցերի, անձի անձնումիւնքութիւն, տեղափոխութեան ազատութիւն, ազատութիւն խղճի, հաւասարութիւն օրէնքի առաջ, պարտագիր—ձրի ուսուցում և այլն և այլն։ Նա լայն ճանապարհ է բանում ժողովրդի առաջ, որպէսզի վերջին ազատօրէն կարողանայ կոիւ մղել լաւագոյն ապագայի համար։

Նա յօգուտ ամբողջ ժողովրդի է, որովհետև երկրի լիակատար տէր է դարձնում նրան, նա ասում է, որ ժողովուրդը ինքը պէտք է վճռէ իր բաղդը։ Նա յօգուտ պրօլետարիատի, յօգուտ քաղաքային և գիւղական չքաւորութեան է, որովհետև նրանց լիուլի հնարաւորութիւն է տալիս կազմակերպւելու և լաւագոյն ապագայի համար ազատօրէն կուելու։ Դասակարգային շահերի պաշտպանութեան համար նա հզօր գործիք է տալիս նրանց ձեռքը, և այդ գործիքը բաղաքական իշխանութիւնն է։ Նա թոյլատրում է ազատ կոիւ մղել իշխանութիւն ձեռք բերելու համար, և այստեղ, ուր բանւոր դասակարգը ձեռք է բերել կառավարութեան յիշեալ ձեւը, նա կարողացել է ազատօրէն օգտել նրանից, այդ իշխանութեանը վերջնականապէս տիրելու համար, որպէսզի դրանով բարեփոխի ամբողջ հասարակական կազմը իսկական հաւասարութեան և ազատութեան հիմքերի վրայ և համար կոլեկտիվիզմի։ Նըրանից վախում են միայն նրանք, որոնք շահագրգուած են ժողովրդի իրաւաղրկութեան և նրա իշխանութեան կրծատման մէջ։ Ի հարկէ, դրանց թւից չէ բանւոր դասակարգը։



11

Amplius quodlibet auctoritatee iurisprudenter interpretari posse videtur ut etiam ad aliud iurisprudentiam. Ita enim iurisprudentia non est necessaria ut sibi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset. Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Et si iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.

Quoniam iurisprudentia non est nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset, non est iurisprudentia nisi a ipsam servata permaneatur, sed ut a ipsam interpretari posset.



318
5.2

SP
ch. S.
hit

ՀՀ Ազգային գրադարան



NL0198641

